Սիպիլ

Կյանքը

Երազել, երազե՞լ վարդերուն քով թառամած,
Երազել և հուսալ սև երկինքեն ամպամած,
Աստղերեն անգորով, և ամպրոպեն, շանթեն ալ

Գութ մուրա՞լ:

Հավատալ, հավատա՞լ տիեզերքին բարության.
Ջինաթափ, անձնատուր բախտի սուրին՝ անվարան,
Կեղեքվիլ, արյունիլ, սակայն չըլլալ սրտաաբեկ

Ո՞չ, երբեք:

Տառապիլ, գալարվի՞լ, այլ ապրիլ միշտ երազով,
Բոցին մեջ գեհենին հովանիներ տեսնել զով,
Եվ ժպտիլ անվրդով արյուն հոսի երբ սրտեդ

Վետ առ վետ:

Երազել, երազել մինչև իղձերդ արփանուշ
Փըշրվին ու մարին, հոգիդ պատե քար ու փուշ,
Եվ թաղվի երազդ ալ, մոխիր կտրած հողին տակ

Անհատակ:

1930